Edic Baghdasarian
(Ed. Germanic)

A Military History of the Armenian People and the Armed Forces

From Old Times to Present Days
(in Armenian)

One-Volume Edition

A Summary of Three-Volume Edition

Toronto-Canada
2019

© Edic Baghdasarian © Էդիկ Բաղդասարյան

www.Edic-Baghdasarian.com

Հայոց զինյալ պայքարը և բանակը

Մեկ հատորով

Համառոտ Համայնագիր

Հայոց զինյալ պայքարը և բանակը

Էդիկ Բաղդասարյան

Էդիկ Բաղդասարյան

Հայոց զինյալ պայքարը և հայկական բանակը պատմության ընթացքում

Մեկ Հատորով

(Սկզբից մինչև մեր օրերը)

Հայկական Ուսումնասիրությունների Կենտրոն

The Armenian Research Center
Toronto-Canada

2019
Տորոնտո - Կանադա

ISBN: 978-1-927860-64-9

Սույն աշխատությունը հեղինակը նվերվում է 2016թ. Ապրիլյան քառօրյա պատերազմի բոլոր հերոսների և հետևյալ զոհերի անմոռաց հիշատակին

Քյարամ Սլոյան

Արմենակ Ուրֆանյան

Կարեն Ներսիսյան

Սասուն Մկրտչյան

Բովանդակություն

Առաջաբան 9
Հայոց ձորի ճակատամարտը (մ.թ.ա.2492թ.)..... 15
Հնագույն հիշատակությունը Հայաստանի Հայերի մասին 19
Առաջին հայկական տերությունը՝ Արատտա 22
Խեթական պետության զինված ուժերը..... 26
Միտանիի պետության զինված ուժերը..... 28
Հայասա-Ազզիի թագավորության զինված ուժերը 29
Նաիրյան զինված ուժեր..... 31
Ուրուատրի-Նաիրի ցեղային միավորումներ 33
Վանի Արարատյան թագավորության(Ուրարտու) զինված ուժերը 35
Երվանդունիների թագավորության զինված ուժեր..... 58
Երվանդունիների հարստությունը 69
Հայոց Արտաշեսյան Թագավորության հիմնադրումը և բանակը..... 71
Արտաշեսյան հարստությունը 86
Հռոմեական (1-6) եւ պարթեւական դրածոներ (7-12)..... 86
Հայաստանը Հայ Արշակունիների ժամանակ(մ.թ. 1-5 դարեր) 87
Հայաստանի Արշաակունի թագավորները 93
Արշակունյաց Հայաստանի ռազմական ուժերն ըստ Զորանամակի..... 95
Մարզպանական Հայաստանը5-7 դարերում..... 98
Հայ մարզպաններ..... 110
Հայ Ժողովրդի ընդվզումները կայսրության դեմ..... 112
Պետական կարգը Հայաստանում 1-7 դդ..... 114
Հայաստանը Արաբական տիտապետության ներքո 7-9 դարերում 115
ՀԱՅՈՑ ԻՇԽԱՆՆԵՐ 122
Զինված ուժերը Բագրատունիների օրոք 123
Զաքարյանների իշխանությունը 12-14 դարերում..... 127
Կիլիկիայի Հայկական Թագավորությունը(1080-1424)..... 131
Միջնադարյան Հայաստանի զինատեսակները 139
Հայաստանի քաղաքական վիճակը14-18-րդ դարերում 145
Հայկական Սղնախներիպայքարը Իրանի Տիրապետության դեմ..... 149
Երևանի 1724թ. հերոսական պաշտպանությունը 152
Հայկական իշխանությունները 17-18 դարերում..... 153
Խաչենի իշխանություն 154
Խաչենի իշխանական տան տոհմաբանություն 155
Խաչենի Մելիքությունը 157
Ծարի Մելիքությունը 157
Պռոշյանների իշխանությունը..... 157
Խաղբակյանների զինանշանները..... 158
Դոփյանների իշխանությունը 159
Արտազի կամ Մակվի Հայկական իշխանությունը 159
Համշենի հայկական կիսանկախ իշխանություն 161
Հայկական ազգային զինված ուժերը համահայկական պետ. բաց.
ժամանակաշրջանում..... 162
Հայկական զինվորական կազմավորումները17-18-րդ դարերում..... 163
Հայերի մասնակցությունը 1826-1828 թթՌուս-պարսկական պատ. 171
Ազգային-ազատագրական շարժումները1850-1860-ական թթ. 178
1- Զեյթունի ինքնապաշտպանական պայքարը1830-50-ական թթ. 178
2- Զեյթունի 1862 թ. ապստամբությունը 180
3- Զեյթունի ինքնապաշտպանությունը 181
1877-1878 թթ. Ռուս-թուրքական պատերազմըեւ հայերը..... 183
Հայդուկային շարժումը 186
Ազգային-ազատագրական շարժումները1890-ական թվականներին .. 190

Կուկունյանի խմբի արշավանքը 190
Սասունի 1894 թ. ապստամբությունը 191
Հայաստանը 20-րդ դարի սկզբին 193
Ազատագրական շարժումների ծավալումը 193
Առաքելոց վանքի կռիվը 193
Սասունի ինքնապաշտպանությունը 194
Հայ-թաթարական (ադրբեջանական)ընդհարումները 197
Կամավորական շարժումը 199
Ինքնապաշտպանական հերոսամարտերը 1915 թ. 209
Վանի ինքնապաշտպանական հերոսամարտը 209
Ինքնապաշտպանական հերոսամարտերը այլ բնակավայրերում 212
Հայկական զորամիավորումների ստեղծումը: 214
Թուրքերի հարձակումը 214
Թուրքական զորքերի ներխուժումը Արեւելյան Հայաստան, ... 215
Մայիսյան հերոսամարտերը 215
Հայաստանի առաջին հանրապետությունը(1918թ. մայիս - 1920թ) 220
Հայաստանի Հանրապետության հռչակումը 220
Բաթումի պայմանագիրը 221
Ազգային բանակի ստեղծումը 222
Հայկական բանակի սպառազինությունը(1918ՎՆ1920 թթ.) 231
Առաջին հանրապետության բանակի հրաձգային զենքը 234
Հայաստանի առաջին հանրապետության օդուժը 235
Հայ-վրացական հարաբերությունները 236
Հայ-ադրբեջանական հարաբերությունները 236
1920թ. թուրք-հայկական պատերազմը, Հայ.Հանր.անկումը 238
Ալեքսանդրապոլի պայմանագիրը 242
Կիլիկիայի հայկական հարապետություն 243
Կիլիկիայի ազգաբնակչությունը 243
Հաճընի հերոսամարտը 243
Հայկական լեգեոն 246
Հայկական Լեգեոնը Եվ Կիլիկիայի Ազատագրումը 248
Կիլիկիայի հայկական իշանությունները 250
Խորհրդային վարչակազմի հաստատումը 253
Քաղաքացիական կռիվները Խորհրդային Հայաստանում 1921 թ. 258
Փետրվարյան արկածախնդրությունը 258
Լոռու եւ Ախալքալաքի խնդիրը 263
Խորհրդային Հայաստանի Կարմիր Բանակի ստեղծումը 265
Հայաստանը համաշխարյանին երկրորդ պատերազմի տարիներին .. 270
Ֆաշիստական Գերմանիայի հարձակումը ԽՍՀՄ-ի վրա 270
Հայկական լեգիոն 273
Հայ ժողովրդի զավակները ռազմի դաշտում 284
Սովետական Հայաստանի Զորային կազմավորումները 284
Պարտիզանական պայքարի շարքերում 297
Սփյուռքահայությունը և Երկրորդ համաշխարհային պատերազմը ... 298
Ղարաբաղյան ազատագրական շարժումը 301
Արցախը պատմության ընթացքում 302
Մինչխորհրդային ժամանակաշրջան 303
Լեռնային Ղարաբաղը խորհրդային տարիներին(1920-1990) 303
Ազատագրական շարժման վերելքը 305
Պատերազմ. գործողություն. սանձազերծումը Ադրբեջանի կողմից 306
Հայաստանի և Արցախի Հանրապետությունները 1991-2008թթ. 308
Հայ. Հանրապետությունը և Հայ. ազգային բանակի կազմավորումը .. 311
Արցախյան ազատագրական պատերազմի5 հիմնական փուլերը 319
ՀՀ Զինված Ուժերի Զինանշանը 320
ՊՆ Վարչություններ Եվ Առանձին Բաժիններ 337

ԶՈՒ ԳՇ վարչություններ եվ առանձին Բաժիններ 337
Զորատեսակները և բաժինները բանակաշինության այս փուլում 338
Կորուստներ..... 339
2016թ. Ապրիլյան Քառօրյա պատերազմ.....340

Հավելված

Հայաստանի անվտանգության մարմինների պատմութ.թանգարան .. 347
Հին Հայաստանում անվտանգության ապահովման պատմությունից . 347
1918-1920 թ. թ. Հայաստանի Ա. Հանրա..անվտանգ. մարմինները 351
1921-1988 թ. թ. Խորհրդային Հայաստանի անվտանգ. մարմինները .. 355
1988-1991 թ. թ. ՀԽՍՀ պետանվտանգության մարմինները 362
Հետախուզության և հակահետախուզության ժամ. պատմությունից . 366
ՀՀ Ազգային Անվտ. Մարմին. Մասնակցութ. Արցախ. Պատերազմին .. 369
Զինվորական կոչումներ 373
ԽՍՀՄ զինված ուժերի զինծառայողների զինվորական կոչումները.... 374
ՀՀ ԶՈՒ զինծառայողներին շնորհվող զինվորական կոչումները 375
Հայ գեներալները Ռուսաստանի կայսրության բանակում..... 376
Հայերը Իրանական բանակում.....377
Հայերն օսմանեան բանակում(ԺԴ դարից մինչեւ 1918թ. ուրուագիծ) . 384
Հայ, հայազգի, ծագումով հայ գեներալներ, մարշալներ, ծովակալներ..404
Ոստիկանությունը Հայաստանում 409
Հայկական զիննշաններ 413
Հայկական բանակի համազգեստները՝ 432
Ոստիկանության կոչումները 437

Հեղինակի մասին.....438

Վերջ

Առաջաբան

Իր բազմադարյան պատմության ընթացքում գոյատեւման, սոցիալական եւ ազգային ազատագրության, իր լավ ապագայի համար մաքառումների դաժան ուղի է անցել, օրհասական պահեր է ապրել հայ ժողովուրդը: Նա առանձնապես ծանր փորձության ենթարկվեց, մեծագույն ողբերգություն ապրեց առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմի դժնդակ տարիներին:

Այդ սարսափելի դեպքը արդյունքն էր Հայաստանի հերթական ու հետզհետե ռազմա-քաղաքական թուլացման, զանազան արտաքին արշավանքների ու մարտերում հայկական բանակի անհաջողության և նույնիսկ նրա բացակայության, հայրենալքման, ներքին ու արտաքին հասարակական-քաղաքական ու հասարակական-տնտեսական մրցակ-ցության, ներքին անհամաձայնությունների եւ ամենագլխավորը՝ Արեւելք-Արեւմուտք ռազմա-քաղաքական հակամարտության:

Հայ ժողովրդի պատմությունը պայքարի ու պատերազմի պատմություն է: Անգամ ավանդությունն է փաստում, որ հայն իր գոյության իրավունքը կերտեց հայկյան ադեղից դիպուկ արձակած նետով: Եվ Հայոց ձորի ճակատամարտը, որտեղ Հայկը գետնեց Բելին, համաշխարհային ռազմարվեստի պատմության մեջ նկարագրված հնագույն ճակատամարտն է:

Պատմության հաղորդած դաս է, որ երբ թուլացել է հայկյան ադեղը, երբ թուլացել է հայոց բազուկը, թշնամու սուրն է կախվել ազգի գլխին:

Հայը դեռ հազարամյակներ առաջ ռազմարվեստի մեջ իր նորամուծությունները մտցրեց. առաջին անգամ երկաթի կիրառու-թյունը, երկաթյա զենք ու զրահի առաջին կիրառությունը հայոց նախնիներին է պատկանում, առաջին հեծելազորի ստեղծման և ձին որպես ռազմի գործիք կիրառելու պատիվը նույնպես հայոց նախնիներինն է:

Շատ տերություններ կորան, փոշիացան պատմության քառուղիներում, բայց հայոց բանակը հայ ազգի գոյության ու կենսունակության գրավականը եղավ: Որտեղ ասես որ արյուն չի թափել հայ զինվորը: Դեռ հեռավոր մ.թ.ա. 612 թվականին Բաբելոնն ու Մարաստանը իրենց թշնամի Նինվեն կործանելու համար փնտրում էին հայ զինվորի աջակցությունը, և Պարույր Հայկազնը իր հեծյալներին առաջնորդեց Միջագետք՝ կործանելու Նինվեն՝ հանուն իր ազգի գոյատևման:

Մ.թ.ա. 331 թվականին եվրոպական մայրցամաքից Ասիան նվաճելու եկած Այեքսանդր Մակեդոնացու աշխարհանվաճ անհաղթ բանակներին միակ լուրջ դիմադրությունը հայերը ցույց տվին Գավգամելայի դաշտում, երբ պարսկական բանակի ձախ թևը կազմող հայկական գնդերը կարողացան անսասան մնալ մակեդոնական փաղանգի առջև և դարձյալ երաշխիքը եղան Հայաստանի անկախության: Իսկ երբ մակեդոնական բանակը ցանկացավ արդեն բուն Հայաստանը նվաճել, Սպերի ճակատամարտում հայոց բանակը ջախջախեց մակեդոնացիներին ու սպանեց նրանց զորավար Մենոնին:

Մ.թ.ա. II դարում հզոր Հռոմի հիմքերը ցնցած կարթագենցի Հաննիբալը հայ զինվորի բազկին միայն վստահեց և ապաստան գտավ Հայոց երկրում:

Տիգրան Մեծ արքան հայ հեծելազորի ոտքերի տակ փոշիացրեց ողջ արևելքը: Պարթևստան, Մարաստան, Օսրոյենե, Գամիրք, Ասորիք... Տասնյակի չափ մեծ ու փոքր երկրներ հպատակեցրեց: Բազմիցս ջարդեց հռոմեական լեգեոնները և աստվածացվեց սեփական ժողովրդի կողմից:

62 թվականին հայոց զորքերը կարողացան ջարդել հռոմեական անպարտ բանակը: Հռոմը դեռ երկար պիտի հիշեր այդ նվաստացումը: Ոչ դրանից առաջ, ոչ էլ

հետո, ոչ մի բանակի, ոչ մի զորավարի չի հաջողվել այդպես նվաստացնել Հռոմին։ Եվ այդ հաղթանակով Տրդատ Ա Արշակունին նվաճեց Հայաստանում թագավորելու իրավունքը։

3-րդ դարում Խոսրով Գ Մեծ հայոց արքան հայոց հեծելազորով հրի ու սրի ճարակ դարձրեց Սասանյան դարձած Պարսկաստանը, և պարսից արքան միայն Անանկ Պարթևի դավաճանությամբ կարողացավ կանգնեցնել հայոց հաղթարշավը։

4-րդ դարից Մամիկոնյան պայազատները ղեկավարեցին հայոց զինուժն ու իրենց արյամբ օծեցին հայոց հաղթանակները։ Վասակ Մամիկոնյան սպարապետը սասանեց պարսից և բյուզանդական գորությունը, Մուշեղ Մամիկոնյան գորավարը Ձիրավի դաշտում իր քաջությամբ ու մեծահոգությամբ արժանացավ անգամ իր ոսոխի՝ Շապուհի հիացմունքին, Մանվել Մամիկոնյան սպարապետն օր ծերության մահվան մահճում անիծում է իր բախտը, որ չի նահատակվում ռազմի դաշտում, այլ վախճանվում է անկողնում... Ահա հայ զինվորի, նվիրյալ հրամանատարի կերպարը։

7-րդ դարից հայոց այրուձին կանգնեցրեց իսլամի կանաչ դրոշի շարժը դեպ Եվրոպա։ Եվ արաբական հորդաները, չկարողանալով տիրանալ հայոց հոգին, դեպի Եվրոպա իրենց ուղին հարթեցին՝ նվաճելով ողջ Հյուսիսային Աֆրիկան, որտեղից էլ անցնելով Ջիբրալթարը՝ ոտք դրեցին եվրոպական մայրցամաք։

Եվ 9-րդ դարում Բագրատունի ասպետները սուր բարձրացրին խալիֆաթի դեմ ու առաջնորդեցին հային դեպի ազատություն։ Բագրատունյաց խոնարհված դրոշը փառքով պսակեցին Զաքարյան հսկաները, որ ազատության հաղթարշավ սկսելով Լոռուց՝ կարճ ժամանակում թոթափեցին ստրկության շղթաներն ու թագով զարդարեցին իրենց լուսավոր ճակատները։
Անգամ օտար հողում՝ Կիլիկիո երկրում հայոց զինվորը հայրենիք կերտեց ու պետականություն ստեղծեց։

Եվ որտեղ ասես, որ հայ զինվորը իր կեցվածքով չսրբագրեց հայոց պատմությունը։ Բյուզանդիայում դարեդար ամենամարտունակը հենց Արմենիակների բանակաթեմն էր (Հռոմեական կայսրությունում՝ վարչական միավոր)։ Հարյուրամյակներ շարունակ արմեն և քաջ բառերը հոմանիշներ էին։ Եվ հենց հայ զինվորականության միջից ելած հայագն կայսրերը հոգեվարքից հանեցին Բյուզանդիան և հզորություն ու փառք բերին նրան։

Եգիպտոսում անգամ տասնյակ հազարավոր հայ զինվորա-կանություն էր հաստատվել, և հայ ժողովրդի ցրված բեկորները Աֆրիկայի կիզիչ արևի տակ հավաքվելով՝ ապրելու և արարելու իրավունք վաստակեցին՝ ամբողջ մի դար իրենց ձեռքը վերցնելով Եգիպտոսի կառավարումը։ Հեռավոր Բուլղարիայում Սամուել Կոմսաձագի որդիները բուլղար ժողովրդին առաջնորդեցին դեպի ազատություն ու իրենց ճակատները պսակեցին թագով։ Հայերը կռվեցին խաչակիր թալանչիների դեմ Գրյունվալդում, կռվեցին հանուն Ռուսաստանի...

Անպարտելի Նապոլեոնի բանակում ամենաանպարտելին հենց մամլուքների հայկական գորաջոկատն էր, որն առաջնորդում էր քաջ Ռոստոմը։ Եվ ճակատագրի մեծ հեգնանքով ժողովուրդների մեծ ճակատամարտում՝ Աուստերլիցում, Նապոլեոնի բանակը պիտի առաջնորդեր նրա հավատարիմ օգնականն ու փեսան՝ Նեապոլի թագավոր Հովակիմ Մյուրատը՝ ծնունդով Արցախից։ Նրա դեմ պիտի կանգներ կոմս Վալերյան Մադաթովը՝ դարձյալ ծնունդով Արցախից։ Եվ երկու արցախցիներ պիտի վճռեին աշխարհի ճակատագիրը...

Եվ բուն հայոց երկրում հայի ոգին արթնացավ ու հայի բազուկը սկսեց գործել դարձյալ Արցախ աշխարհում. Դավիթ Բեկի քաջերը առաջին կարապետները եղան, որ սուր բարձրացրին օտարի լուծը թոթափելու համար։ Եվ ամեն ինչ սկսվեց նորից. Սասունում, Վասպուրականում, Տարոնում...

Եվ հայի հուժկու բազուկը դարձյալ իջավ Սարդարապատում, Բաշ Ապարանում, Ղարաքիլիսայում։ Ու հայը վերջապես գարթնեց նիրհից, գենք վերցրեց, գինվորագրվեց ու հաղթեց։

Բայց, դա սկիզբն էր միայն։ Ու ամեն ինչ շարունակվեց... Պատմությունը պարզ դաս է տվել. երբ ժանգոտել է, երբ բթացել է հայի սուրը՝ անմիջապես նրա գլխին փայլատակել է թշնամունը։ Ուրեմն հարկ է դաս քաղել անցյալից։

Վերջին տարիներին միջազգային քաղաքականության ամենաթեժ կետերից մեկը Մերձավոր Արեւելքն է, որը Զբիգնեւ Բժեզինսկին անվանել է «գլոբալ Բալկաններ»։ Բուն «Մեծ Մերձավոր Արեւելք» ծրագիրը առաջ քաշվեց Ջեյմս Բեյքերի Հրապարակային քաղաքականության ինստիտուտի մասնակցությամբ։ Այն նախատեսում է Մերձավոր եւ Միջին Արեւելքի հիմքի վրա աշխարհաքաղաքական նոր տարածաշրջանի ստեղծումը, որում ընդգրկվում են Կենտրոնական Ասիան, Հարավային Կովկասը, Մերձավոր Արեւելքի արաբական երկրները, Իսրայելը, Թուրքիան, Իրանը, Աֆղանստանը, Պակիստանը եւ Հյուսիսային Աֆրիկան։ Ըստ այդ նախագծի, ԱՄՆ-ն Չինաստանից մինչեւ Բալկաններ ստեղծում է «ազատ մայրուղի», որտեղ չի կարող գոյություն ունենալ ԱՄՆ շահերին հակառակվող որեւէ երկիր ու վարչակարգ։ Դա կլինի տարածաշրջան ԱՄՆ-ի համար, որը մեծ նշանակություն կունենա համաշխարհային տնտեսակարգի վրա ազդելու համար. այստեղ են շահագործվում նավթի ու գազի գգայի պաշարները, որից այսօր կախում ունի նաեւ ԱՄՆ-ի տնտեսությունը։

Արեւելք-Արեւմունք հակամարտության արդյունքում առաջացել է «Արեւելյան Հարցը» որի անբաժան մասն է կազմում նաեւ «Հայկական Հարցը»։ Հայկական հարցի լուծման համար հարկավոր են՝ Հայաստանի համար զարգացած տնտեսություն որի արդյունքում ուժեղագույն բանակ, որը ոչ թե կկարողանա պաշտպանել հայրենի սահմանները, այլ հայկական հողերը կկարողանա վերադարձնել Հայ ժողովրդին, քանի որ մեր շրջանային ուղղակի թշնամին վայրագ թուրքական ազգերն են և նրանց հետ կարելի է միայն և միայն բանակցել պատերազմի դաշտում, այն ինչ որ Հայ ժողովրդի մեծ զավակ Ալեքսանդր Միասնիկյանն է ասել ժամանակին։

Այդպես էլ, պարզից էլ պարզ է, որ մեր հեռավոր թշնամիներն ու անմիջական հարևանները իրենց հաշիվը լավ կգիտակցեն։

Սա է իրականությունը, Հայ ժողովուրդը օր առաջ պիտի ունենա ամենահզոր բանակներից մեկը, թեև մեր ներկա բանակը արժանի է ամենայն գնահատանքի, սակայն ամբողջ մեր ժողովուրդը պարտավոր է բոլոր իր հնարավորությունները ծառայեցնել այդ մեծագույն նպատակին։

Այս աշխատության նպատակն է ներկայացնել հայոց ռազմական ուժերի գործունեության համառոտ պատմությունն ու նրա կազմավորման ու կազմակերպման գանագան փուլերը պատմության ամենավաղ ժամանակաշրջանից մինչ մեր օրերը։ Սույն հատորը ամփոփում է նույն խորագրով եռհատորյա մեր աշխատությունը, որը հրատարակվելի սրանից մեկ ամիս առաջ Տորոնտոի Հայկական Ուսումնասիրությունների հրատարակությամբ։

Լիահույս ենք, որ սիրելի ընթերցողը տողերիս հեղինակին կսատարի իր կառուցողական առաջարկներով ու հնարավոր վրիպումների մասին ահազանգելով։

Էդիկ Բաղդասարյան
(Էդ. Գերմանիկ)
Ապրիլի 30, 2019 թ.
ՀՈՒԿ, Տորոնտո, Կանադա
edbagh@gmail.com